ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

« ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-13 » ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«22» «01» 2026թ.

ք. Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի պետ Կ. Աբազյան (հանձնաժողովի նախագահ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի ավագ մասնագետ Է.Արշակյան (գնահատող անդամ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի գլխավոր ճարտարագետ Մ.Վահրադյան (գնահատող անդամ):
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

- **«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում** կատարվել է լրացում, համաձայն որի հունվարի 27-ը սահմանվել է որպես **ոչ աշխատանքային օր՝ «Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր»**:
- **«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-13»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը փոփոխվել է՝ հունվարի 26-ի ժամը 10:00-ի փոխարեն սահմանելով փետրվարի 9-ը ժամը 10:00-ը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերով հակադարձ աճուրդի ժամանակացույց է համարվել 27.01.2026 թվականը ժամը 10:00-ը:
- Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով **տրանսպորտային նյութերի /վառելիքի/** ձեռքբերման գնում կատարելու հրավերի տեքստը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին հայտարարությունով ելույթ ունեցավ հանձնաժողովի նախագահ՝ Կ. Աբազյանը:

- Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանել ԷԱՃ-ի միջոցով գնում կատարելու հրավերի տեքստը հրապարակելու օրվան հաջորդող **18-րդ օրացուցային օրը /09.02.2026թ. ժամը 10:00/,** որին հաջորդող աշխատանքային օրը **/10.02.2026թ. ժամը 10:00/,** տեղի կունենա հակադարձ աճուրդը և Հանձնաժողովի հաջորդ նիստը՝ ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. Աբազյան

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Է. Արշակյան

Մ. Վահրադյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. Սահակյան